Ա. ՀԱՏՈՐ ՏԵՏՐ 14

ԱԶԱՏ ԽՕՍՔ

ՇԱԲԱԹ, 28 ՅՈՒԼԻՍ 1906, ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ

ՔԻԹԵՐԹ

Քիթը կը մեկնի կոր, Քիթը մեկնեցա՞ւ...

Ուրեմն լրջօրէն, շատ աւելի լրջօրէն քան որչափ չէինք տպաւեր ծիծաղելիութեան և թեթեւութեան թըռուցիկ անձէդ, ուրեմն քրուցնէ, քեզի պէս սատապատուած մէկու մը կողմէն զարմանալի խրատութեամբ մը, մեկնեցար գացիր, ո՞վ Քիթ, առանց մնաք բարովի, անչափինդ և անխի՞նդ...

Ո՞վ մեծի ապերախտութեան... հանդէպ մանաւանդ մեզի, մեզի՛, երկու մեզի որ երբ հոս էիր, — ո՞վ անդարձ կորսուած օրեր, ոչ մէկ առիթ փախցուցինք նոր ու զուարթ բարև մը տալու քեզի, ո՛վ Քիթ, որ միշտ թանկագին որպիսութիւնովդ զբաղեցանք, գըրաւոր թէ բերանացի, որ զքեզ դիտեցինք միշտ անըսպառ զուարճութեամբ և զքեզ ցուցուցինք ուր որ ըլլայիր, ազատ ընթրիկներու ցխին մէջ մխրճուն թէ անգոյն «Հորիզոն»ին վրայ անողոք յստակութեամբ անջատուած ու ցցուն, որ երբ հարբուխ կ'ըլլայիր և ազգային ցաւերուն վրայ փարթամօրէն կուլայիր չիթ առ չիթ կամ տեղական խնդիրներուն վրայ մեծաշունչ կը փնդտայիր, իսկոյն կը բանայինք մեր խըն-

դուքին լայնափիւռ և Նախշուն հովանոցը,-մեզի՛ որ ամէնէն առաջ տեսանք ու մատնանիշ ըրինք քու կարմիրիդ, ո՜վ Բիթ, կարմիրով մը անսովոր, որ վրադ զարկած ցոլքն էր համբաւաւոր ու հէ՜ք 10 ոսկիներուն, որոնք այնքան բան կորսնցուցին... անցնելով մեր գօտիային ծաղրին ք է զ ա պ էն.

Արդեօք ամչցա՞ր մեր սուր աչքերուն ինքզինքդ անգամ մը ևս որս ընծայելէ այն սուտէն ետքը որ քու հուսկ վերջին գործդ եղաւ, ո՛չ գլուխ՝ այլ պոչգործոցդ, քանի որ յետինն էր. Լո՛ւր տարածել թէ ծովու վրայ բժիշկ պիտի երթա՛ս, յօդուած մը ներշնչել այս մեծազուարճ լուրով, մէկ երկու ամիս զմեզ այս պատրանքին մէջ պահել, և յետոյ յանկարծ, աճպարարութեամբ մը որ կը վայլէ քեզի, ծովը ցամաքի փոխել և մեկնիլ իբր սովորական, իբր գռեհիկ բժիշկ մը որ երկրէ մը ուրիշ երկիր կը փոխադրուի...

Ու ես, միամիտս - ինծի պէս քանի՜ներ, - որ ամիսներով զուարճացայ, հեռանկարովը ծովերուն վըրայ նաւայած Բիթիդ, կայմերուն և ցռ՚ափայտին մըրցակից, ալիքներուն հետ գոտեմարտող լեսուր, պըղտոր ջուրերու մէջ հաճոյքով խարխափող, փոթորիկին դէմ երիվարող, վրնջող, խրխնջող, ծովուն փրփրալից ու կաս-կապուտ կորած կատաղութեանը պատասխանելով կաս-կարմիր հարբեցուխի մը անսպառ ժայթքումներուն ու ահեղաւոր փռնտուքներովը, - Բիթիդ որ պիտի կրնար իբրև կողմնացոյց ծառայել նաւուն, եթէ ան ալ քեզի պէս ընթանար ստութեան և ծուռութեան ճամբէն...

Ո՞վ պիտի դարմանէ սակայն քու կորուստդ..., ո՞վ պիտի լեցնէ քու ձգած բացդ Աղեքսանդրիոյ զաւեշ-

տանհայ լեռներին և վանս. Նարժեղ բաշայի քասլին մէջ—. Ով, ո՞ր ցանձնապատանը պիտի բանէ քու սեղղ. որ այնքան մեծ էր ու բարձր, և որ վախենամ թէ պիտի մնայ չաւարտենալէ փարձու։

Բարձ՜, ի՞նչ պիտի ըլլայ այսուհետև վիճակը մեռ-րին, որ երբ տագտուկին ու տագնապաւորութեան տա-քերէն նեղուէինք ու քրտնաթոր ծանրաշնչէինք, կա-մացուկ մը կուգայինք քու զովածիծաղ ստուերին տակ, ո՜վ Ծիթ, հանգչիլ և ընկողմանիլ քէյֆին պարսկա-կան գորգերուն վրայ։

Երբ ձանձրոյթը մեր հոգւոյն վրայ ծանրանար մշուշի մը պէս կը բաւէր որ քեզի նայէինք, Ծիթ, և ահա՛ ծիծաղին արևը կը ծագէր խոկոյն մեր դիմաց վրայ, ու մշուշը կը հալածէ՜ր, մշուշը կը փարատէր…

Դուն թառն էիր անթառամ որուն վրայ, ազգ-տեղական գործերու լրջութիւններէն պժգոհ, խոնջած՝ կուգայինք հանգչիլ, լիաթոք ծծելու համար օդը բար-ձունքներուն՝ ուր ազատ ու խինդալի ծիծաղները կը կը ճախրեն մեծաթռիչ, ուր զուարթութեան մրրիկը, ուր զուարթութեան քահքահ հովը կը փչէ…

ՊՈՆԴ

—

ԽՕՍՔԻ ՇԱՐՈՑ

Սիրելի ընթերցողներ.

Կը յիշէք անշուշտ որ Ս. Գրքին մէջ սանկ գըր-ուածք մը կայ։

«Սատանան՝ որ առաջ հրեշտակ էր, բայց իր ամ-պարտաւանութեամբը երկնքէն ինկաւ ու վռնտուե-ցաւ……»

Այս մասին աւելի մեծ բայատրութիւն չի կայ Ս. Գիրքին մէջ, բայց Արևելք Ամիրային «բանալի»ին մէջ ամենապայծառ բայատրութիւնը կայ և հասարակ. Ինչպէս գիտէք սատանաները սատանա չեղած Որ էն ին ամէնէն սիրելի և ամէնէն մտերիմ հրեշտակներն էին, վասնզի մնայեալ բոլոր հրեշտակաց գունդերէն ու դասերէն և նոյնիսկ Սերոբէներէն ու Քերոբէներէն ալ վեր էին, իրենց խելքովը և ճարպիկութեամբը, անոր համար միշտ Որ էն ին շուրջը կը պտտէին կամ կը դառնային թիթիռնիկներուն պէս և ասոնց գունդին պատուոյ անունն էր Առաջին դասք. իսկ ամբողջին մէկէն՝ Վերին զօրութիւնք։ (Արև. գլ. 11. հմր. 94)։ Արդ այս խելացի ու բարձրասահման բանակին սպարապետը մատեչալ Ք. Զ. և սպայակոյտի կարևոր անդամներէն Ք. Մ. Զ. և այլք մասնաւոր խորհրդակցութեան մէջ որոշեցին նոյն գիշերը Որ էն ին հանգատարան երթալէն վերջը միթինկ մը գումարել և որոշումներ քուէարկել։ Ասոր վրայ պօրազանճի պաշիին հրաման տուին որ՝ ի հարկին հաղրը պօրուսին չալէ. գունդին կարևոր անդամներուն ալ եասախճի պաշիին ձեռքովը հրաւէրի նամակներ գրրուեցին. վերջապէս ամէն զգուշութիւն ձեռք առին պահապաններ կարգեցին, հրեղէն ու ջրեղէն գունդերէն և իրենք ալ գացին դրախտին հարաւ արևելեան կողմը (եթէ չհասկնաք թէ ինչ կը նշանակէ հարաւ արևելեան կողմ, տնօրէն Սմբատին գացէք ան ձեզի կը բացատրէ). Աքքասիայի ծառերով վրանի ձևով ծածկուած հովասուն վայր մը կար, այնտեղ ծաղիկներէ պատրաստուած բազմոցներուն մէջը թաղուեցան։

Մէկ կողմէն անուշ հովերը կը փչէին, - դեռ դեփփ։ որ ստեղծուած չէր - միւս կողմէն ագռաւները՝ որ

ան ատեն անուշ ձայն ունէին, մեր տիրացուին պէս տուէթթօ և քէնթէթթօներ կը յօրինէին. ազգին չա-տըրուանները մեղր, կաթ և գինի կը հոսէին, անդին աղբերակները և առուակները չամբանիա կը ծորէին, հոս մայմունները ու չէպէքները գիրկընդխառն լան-սիյէ կը խաղային. հոն քօթօթները ու փիսիկները պիր տէր պիր կը ցատկէին։ Տեղ մը ծառերուն տակ վարդապետներն մարապետները առանց գիտնալու թէ իրենք մերկ են՝ որովհետեւ տակաւին արգիլուած ծառին խնձորը իմացուած չէր, տանկալա փիչաւի կ'եղ-լէին ու կ'իջնէին. ուրիշ տեղ մըն ալ հրեշտակները ու արքայութեան գաւարիէրա աղջիկները իրար խառ-նուած անմեղօրէն աչք կապուկ կը ձեւցնէին, վա-սնզի դեռ օձը մէջերնին մտած չէր։

Ո՜հ, ի՜նչ սքանչելի, հիանալի և զմայլելի օրեր էին։ Ամենքն ալ և ամէն բան մերկ ու բաց էին, բայց ամէն բան անմեղութիւն ու բարոյականութիւն կը հոտէր. կարծես թէ հիմակուան մեր օրերուն աղջիկ-ներն ու մանչերը եղած ըլլային......

Հապա աս մեր խղտայիֆին թէփօյին մեծու-թեամբը արեւին ի՞նչ կ'ըսէք որ նոր փեսայի մը պէս՝ ծանր ծանր գումպարօզին տունը կը մտնէր, որով-հետեւ մայրը ցերեկուան կերակուրին միսաֆիրին հետ երկու գաւաթ կէս կոնծած ըլլալուն համար քունը տարեր էր, տակաւին չէր արթնցած. իսկ գիշերուան թագուհի արծաթափայլ լուսին հանըմն ալ աքսէ-տըրֆօզին դուռնէն դուրս կը սպրդէր։

Ահա այս կանոնաւորութեամբ ժամանակը կը սա-հէր կերթար մինչև որ գիշերուան պահապանները ժա-մը 12 ըլլալը իմացուցին իրենց սօփաներով. Ո ր է ն ը հանգստանալու գնաց. ամէն կողմ կատարեալ լռու-

թիւն տիրեց. իսկ մեր ժողովական և հրաւիրեալ պարոնները ոտքերնուն մատներնուն վրայ և պարուհիները ոտիկներնուն մատիկներնուն վրայ սուսիկ բուսիկ հետզհետէ հաւաքուելյան որոշեալ ժամադրավայրը, առաջուընէ եղած կարգադրութեան համաձայն.

Ամէնքն ալ մեծ հետաքրքրութեան և դողի մէջ էին, որովհետև ժողովին կարգ խնդրոյը ամենակարևոր և ամենածանր խնդիր մը կը պարունակէր։

Նախագահը՝ մարեշալ Ք. Զ. իր աթոռին վրայ բազմած էր. կոնակը տուած էր Ք. Մ. Զ. փաշային որ ատենագետի առժամանակեայ պաշտօնը կը վարէր. ատոր դիմացը վերին զօրութեանց ընդհանուր արարողապետը՝ Պ. Պ. Ք. Էֆէնտին որ քարտուղարի սետիրին վրայ նստած էր իրեն օգնական ունենալով մաժոր Շ. Ն. զաւակը։ Եւ այսպէս կարգաւ շարուած էին ընդհանուր մատակարար Ք. Ն. Ֆ., Պ. Յ. պարոն, Ս. Զ. Ր. պարոն Ք. Ս. պարպող պարոն, Ճ. Պ. Բ. քաշող սիւնկիւճիւ պաշի Զ. Ր. շավուշ դուարին, քովիկը պորազանճի պաշի Զ. Լ. Կէօթիւրիյօն աղա. իսկ դըրախտի ընդհանուր կառավարութեան անդամները ամէնքն ալ սալամբաս հերկելէներու վրայ նստած ամէն կողմ կը տուրային և պահպանութիւն կ'ընէին. Ո՛հ, այն ինչ ա կ ն ա խ տ ի ղ (այս բառն ալ ա ծ խ ա ք օ փ ա տ ա վ ա ճ ա ռ պատուելիին հարցուցէք թէ ուղի՞ղ է։) տեսարան էր. Իսկ այս ամէնուն վրայ քացախ կը քամէր (տակաւին լէմոնը հասած չէր) արևամայր բամբիշա Հ. Թ. պաշիին վրանը, զոր չուրջանակի պաշտելով պաշտպանելով պաշարած էին նիւթեղէն Սերոբէներուն ու Քէրոբէներուն սուսերամերկ ու համայնամերկ գունդերը։

Հոն տեսնել պէտք էր պայծառափայլ և լուսա-

պայծառ Ս. Ր., Փ. Ր., Շ. Ք. Թ., Զ. Փ. և Հ. Ս. Փ. հանրմները՝ որք բոլոր ներկաներուն ուշադրութիւնը իրենց վրայ կեդրոնացուցած էին. մանաւանդ որ այդ դիշեր մասնաւոր կերպով ազամանդի տեղ երկինքէն մէկ քանի աստղեր փրցուցած ու խոթած էին, իսկ ոսկիի տեղ ալ հին լուսիններու կտորուանքներէ զարդեր մխած էին. թող գնաժիշտ և ամենազդի ու հասակի գամէրիէրանները որոնք տեսնողին վրայ հոգի, կամք, խելք չէին թողուր։

Վերջապէս, սիրելի ընթերցող, ի՞նչ կլուիդ ցաւցընեմ, այս նկարագրութիւնը որ կարդացի հեղինակին պատմութեան մէջ, ո՛չ միայն բերնիս այլև քիթիս, ականջիս, աչքիս և այլ ամէն ջուրերը վազել սկսան, իսկ այս անգամ որ այս բոլորը ձեզի գիտցունելու համար արտագրելու սկսած եմ, ալ թերուս վրայ ոյժ չմնաց և գրիչս ձեռքէս ինկաւ։

S. M.

ԲԱՑ ՆԱՄԱԿ Ա. Ա.ԻՆ

Ցարգելի բարեկամ.

Կարդացի Լուսաբերը և Ընդհարումի խնդիրը։ Նախ՝ շնորհակալ եմ որ գրածիս պատասխանած էք և այսպէսով առիթ տուած էք երկուստէք վիճաբանութեան մը որ յամենայն դէպս իր շատ օգտակարութիւնները կըրնայ ունենալ ամէն ճաշակի ընթերցողներուն համար, երկրորդ՝ պատեհութիւն ընծայած էք

ինձ որ անգամ մը եւս ապացուցանեմ թէ ես իմ իրաւունքիս մէջ էի երբ ձեր անտեղի իրարանցումին երեւակայական վախին և անիրականալի թելադրանքին և անընդունելի առաջարկին այն ոճով կը պատասխանէի որ արդէն իմ ընտրութեանս, լեզուիս յարմար էր։

Դուք սիրելիս Արփիար, իմ գրածիս մէջ, սրախօսութիւն, հեգնաբանութիւն, ակնարկութիւն և պերճանք կը նշմարէք և կը գանգատիք թէ ընթերցողին միտքերը պղտորելով կը տարտղնեմ ուշադրանքը. քաւ լիցի, ընդհակառակը՝ ես եմ որ կըսեմ ձեզ թէ, ինչո՞ւ հասարակութեան միտքը նախապաշարելու և անոր վրայ ազդելու համար անգոյ վտանգներ կ'ըստեղծէք. կամ պարզ խօսքով ա թ է շ պ է օ ճ է յ ի մը տեսնելով ե ա ն կ ը ն վ ա ր կը պօռաք։

Եթէ օր մը սիրելիս Արփիար, ձեռքերնիդ լրագիր մը անցնէր և մէջը սա վերտառութեամբ յօդուած մը կարդայիք.

„Մ ե ծ ի ր ա ր ա ն ց ու մ ի Կ. Պ ո լ ի ս.— Ծովային նախարարութեան սպայակոյտի անդամներէն Հաճի Ալի պէյը 2 միլիոն ոսկիի փոխարէն Գերմանիոյ կառավարութեան ծախեր է Խալիլ ուստային նորահնար ընդծովեային գաղտնիքը, ամբողջ Թերսխանէն և Եըլտըզը իրար անցեր են և մեծ անձկութիւն կը տիրէ, ևն.”

Հիմա ըսէ ինծի, սիրելի բարեկամս, երկրորդ օ-
րը չպիտի՞ գրէիք խնդալէն մարելու տպաւո-
րութեան տակ.

„Մենք որ գիտենք թէ Թուրքիոյ ծովային
ոյժը ինչ կ'արժէ կամ կը նշանակէ. մենք որ
վստահ ենք և կրնանք ապացուցանել որ խեղճ
Խալիլ ուստայ ոչ թէ ընդծովեայ, այլ միտխայէ
ամենայէն ուրիշ բան մը շինելու կարողութիւն
ու խելք չունի, հետևաբար այս լուրը կամ կար-
դացողները խնդացնելու համար հնարուած է
կամ տպիչ մէկն է և կամ ուրիշ տեսակ
խաղ մը":

Արդ, այս պարագային, ես իրաւունք կըր-
նա՞յի ունենալ պատասխանելու ձեզի դէմ որ
պ. Ա. Ա.ին գրածը սրախօսութիւնով, ակնար-
կութիւնով՝ և հեգնութիւնով զարդարուած է և
ընթերցողին ծիծաղ կը պատճառէ ևն։ երբե՛ք,
ուրիշ չատ բնական է, երբ դարի կը ցանես,
կորեկ չես՝ կրնար քաղել։

Սիրելի՛ Արփիար, Աղեքսանդրիոյ հայոց՝
պատրիարքարանի հետ ունեցած ընտրութեան
կամ իրաւասութեան խնդրին համար գտած և
գործածած բառդ, շա՜տ շատ ծանր է, շա՜տ
շատ մեծ է, և որպէսզի աւելի և վերջնական
կերպով ապահով ըլլաս թէ իմ ըսածս իրաւ է.
այնատեն ը ն դ հ ա ր ո ւ մ ի վ տ ա ն գ ը խո-
րագրով յօդուածդ Ֆրանսերէնի թարգմանէ, և

ընկերութեան մը մէջ մտնելով յօդուածը թուղթով ծածկէ և միայն խորագիրը ցուցոր և խնդրէ բազմականներէն որ երևակայեն թէ ի՞նչ կրնայ եղած ըլլալ այդ յօդուածին մէջինը։

Առնելիք պատասխաններդ ես մէկիկ մէկիկ տամ մտիկ ըրէ.

1. Ալզաս Լօրէնի խնդրոյն համար թերևս Ֆրանսայի և Գերմանիոյ մէջ խզում առաջ եկած և պատերազմի վտանգ կայ։ —Ո՛չ։

2. Անանկ է նէ, Մարոքի խնդրոյն համար։ —Ո՛չ։

3. Ես հասկցայ ի՛նչ է նէ. քայզերին ճառը և յոխորտանքը մեծ տպաւորութիւն գործեր է Անգլիոյ մէջ և վախ կայ որ Գերմանիոյ անգլիային դեսպանը ետ կանչուի։ —Ո՛չ։

4. Հա՜... հիմա գիտցայ։ Ռուսօ-Ճաբոնական պատերազմին առթիւ մըսթըր Ռուզվէլթի ըրած միջամտութիւնը չէ յաջողեր և... Ո՛չ, Ո՛չ։

5. Ամէնքդ ալ բան մը չէք արժեր. աս ալ մտածելու բա՞ն է։ Ցաչօտայի խնդիրն է։ ան ալ չէ նէ, թազէ թազէ Ագապիին. չէ մնղայ աստուծոյ, Ագապայի խնդիրն է. անցած օր լըրագրին մէջ կարդացինք որ օսմ. Նաւատորմիղին ծայրագոյն արևելքի բաժինը գիշերուան մթութենէն օգտուելով Ալեքսանդրիոյ եղերքները 300000 զօրք (մուխավայէ թերևս) հաներ է ու Մուխթար փաշայի տրամադրութեան տակ դրեր է։

Ո՛չ, ո՛չ, ո՛չ։

6. Տեսա՞ք որ չարժողն ալ դուք էք պէ-
պէքն ալ. այսչափ խելք չկրցա՞ք ընել։

Շաբաթապահները կը պնդէին որ աշխար-
հիս վերջը մօտեցեր է, ապաշխարեցէ՛ք. ուստի
ես կը հաւատամ որ անպատճառ գալ շաբթու
աշխարհք պիտի կործանի.....

Ո՛չ, ո՛չ, ո՛չ, ո՛չ։

7. Վաղ անցանք ախբար, ի՞նչ է դուն բա-
ցատրէ լմնցուր մեզի մերաքի մէջ մի ձգեր։

Ա. Ա. Էֆէնտիմ, Օրմանեան պատրիարքը
չուզեր որ Ալեքսանդրիոյ հայերը իրենց ազգ-
իշխանութիւնը իրենք ընտրեն։ Բարթող փաշան
ալ չուզեր որ հրաժարի. կուզէ թիկտատոր ազ-
գապետ մնալ. ալեքսանդրիացիք ալ՝ երբոր պու-
չաք քէմէյէ տայանմիշ կըլլայ, կ'ապստամբին,
միթինկներ կը կազմեն, կառավարութեան կը դի-
մեն և կարտոնուին օրէնքի հաեմմատ իրենց
խորհուրդը ընտրելու. ասոնք ալ որպէսզի պատ-
րիարքարանի կամայականութենէն միանգամ
ընդ միշտ ազատին խելք կընեն երեսփ. ժողո-
վի ընտրութիւնը քուէարկել. պատրիարքը չեմ
ընդունիր կըսէ, ասոնք ալ կ'ընդունիս ազէկ
մարդ ես կըսեն. վերջապէս կըսեմ, կըսես կըսէ...

Եւ ահա յանկարծ քահ քահ մըն է կը փըր-
թի, որը խնդալէն կը մարի, որը խօսքս ամօթ
տեղը կ'ընէ. և ահա մինչև այսօր այսպէս շա-

րունակուելու վրայ է։

Քիչ մըն ալ Ալջօրէն խօսինք։

Տիրեկլիս Արփիար.

Մերին վերջնական փափաքը և կամքը յայտնենք որպէսզի միջոցին վրայ խորհինք ու համաձայնինք։

Եթէ ժողովուրդ ենք և իրաւունք ունինք.

1. Սահմանադրական ընդհանուր սկզբունքի հիման վրայ երեսփոխանութիւն կ'ուզենք.

2. Կեդրոնացումէ միշտ անզգալապէս հեռանալով ժամանակի ընթացքին հետ դէպի ապակ'դրոնացում երթալ կ'ուզենք։

Ասոր մէջ ոչ ընդհարումի վտանգ կայ և ոչ ընդհանուրի, այլ արդարութեան և յառաջդիմութեան պահանջ և կարիք։ Կամ այսպէս կամ միայն բռնութեան դէմ տեղի կուտանք ինչպէս Ռուսիոյ կաթողիկոսը հանդէպ Զարին։

Բ. Բ.

ԾԻԾԱՂ

— Քա աղջիկս, անցեալ օր քննութեան ատենը տնօրէնը քեզի աչքով իշմար ըրածին պէս ինչո՞ւ իսկոյն չե՛լար եւ պատրաստած ճառդ չը կարդացիր։

— Այո՛, հայրիկս, տեսայ իշմար ընելը բայց

կ'սպասէի որ նախ մայրիկս ելլէ ճաշ կարդայ և յետոյ ես։

— Բա ինչո՞ւ, ան ի՞նչ գիտնայ ճաշ ընելը։

— Ես ի՞նչ գիտնամ հայրիկս, որովհետեւ տը-նօրէնը ինծի իշմար ընելէն առաջ քանիցս մայ-րիկիս իշմար ըրած էր, ատոր համար կ'սպասէի որ մայրիկս նախ ճաշ ըսէ տէ յետոյ ես։

— Ծօ՛ քեզի համար քանի մը աղջիկներ տե-սայ ամմա մուլթլախա աչքս աս դիմացի Մարի-ցային վրայ մնաց, տան տիկին, ընտի՛ր ըլլո՛ղ, բայց ինչ փայտա քի մէկ մեծ խուսուր մը ունի, եօխ-սա՞ ուեարը չեղած ալլըման բան է։

— Բա տուտու, իրա՞ւ աղէկ աղջիկ է, բայց ի՞նչ է ատոր խուսուրը։

— Ի՞նչ պիտի ըլլայ. ըռնէլէ դուն տահա չը տեսար։

— Ինչ։ Բէ՞ք աչքի զարնելիք բան է, քու-զում տուտու ըսէ, ըսէ նայիմ. ի՞նչ է խուսուրը, խնտացած ատենը ակռաները շատ գէշ գէշ կ'ե-րեւա՞յ կոր. քա տուտու, էյէր խուսուրը աս է նէ զարար չունի, ունչու քի էյէր աս աղջիկը մեր տունը գայ նէ խնտալիք չունինք քի ակռա-ները տեսնամ։

— Գուզում Գիրգոր աղա, չու պիզիմ միլլէ-

թին չէօհրէթլէբինին ուճունտաքի եան նէ՞ օ-
լաճագ աքբլ էրտիրէմէյօրում։

- Թ.օհաֆսըն հաճի պէյ, պիզիմ վիլլէթին
հանկը եանլնա աքբլ էրտիրտին քի օ եանա ա-
դբլ էրտիրէճէքսին. ՄԱՎԻ

ՄԵԾ ԱՇԽԱՏԱՆՈՑ

ՕՐԱԳՐԱԿԱՆ ԵՒ ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆՑ

Դ. ՆԱԼԱԹԵԱՆ

ՀԱՅԿԱՆՈՒՇ

ԱՆԴՐԻԱ

15 RUE STAMBOUL 15,

ALEXANDRIE

Այս գրասենեակին մէջ կը պատրաստուին գրագրեալ և նիրկել գրոսի էյլաներ. Թատրոնի. Պլիֆեն. Գեղագրական նիշերներ. արքաթ և ոսկի մանեկրամներ. Քարտեզներ ևն. Զինկոկրաֆիի և հաչվանոցաթերի փորագրեալ գործեր։

Տպարանական ամէն տեսակ գործեր հայ և օտար լեզուներով. Հարուստներու հրաւիրագրեր. այցագրեր նամակագրութիւններ. տոմսակներ. հասարակարներ ևն։ լրներ հարիւրներ պարբերներ լրագրեր ևն։

Մասնաւոր խնամք հայերի և մայրաքնան։ Գներ մատչելի գին։

Այս գրասենեակը ստանձնեցաւ կը յանձնարարենք Ալեքսանդրիոյ Գահիրէի և բոլոր եգիպտահայ ազգաբնակ վայրերի քանի մը տարի յանձնաժողովներու ամենամեծ իրատեսով կը կատարուի և գոհ կը մնան աշխատանքներու տարբերներ։

Մասնաւոր գործատուներու գիտելի տասնի հանդիպելու մը ոչ ոք ոչ հատանոր։

ԹԵՐԹԻԿ

Սոյն օրաթերթը կանոնաւորապէս կը հրատարակուի ամէն առաւօտ և կը պարունակէ ամէն ընթերցողի մատչելի լուրեր ընթացիկ կեանքի մասին ինչպէս նաև հետաքրքրաշարժ թերթօն մը։ Բաժնեգին է Եգիպտոսի մէջ, Ազգքանդրիա, վեցամսեայ՝ 60 ղ. ո. ամսական՝ 10 ղ ո. Գահիրէ, վեցամսեայ՝ 60, ամսակն.՝ 12, Արտասահմն. վեցամս. 80,

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Կը խնդրուի մեր գաւառի բաժանորդներէն որ անյապաղ իրենց բաժնեգինը յղեն մեզ մանտաթոսթով եւ կամ եգիպտական դրոշմաթղթով։

Ազատ Խօսք մինչեւ այժմ կանոնաւորապէս շարունակեց իր հրատարակութիւնը եւ ասկէ ետքն ալ կանոնաւորութեամբ պիտի երեւայ. ուստի մեր բաժանորդները ոեւէ տարակուսութիւն չեն կրնար ունենալ։

«ԱԶԱՏ ԽՕՍՔ» ՁԵՌՔԷ ԿԸ ՎԱՃԱՌՈՒԻ

Աղեքսանդրիա՝ Տ. Թ. Ղազիկեանի քով և Շէրիֆ Փաշա լրագրավաճառ Տ. Թեղլալեանի խանութը։

Գահիրէ՝ լրագրավաճառ Տ. Հունկի և Կօլարըն Բէօչքի քով և «Լուսաբեր» թերթի ցրուիչին մօտ։

Նախորդ շաբթուան թիւերը կը վաճառուին կրկին գինով։

New Victoria Hotel ՍԱՆ ՍԹԷՖԱՆՕ

ՆՈՐ ՎԻՔԹՕՐԻԱ ՕԹԷԼ Աղեքսանդրիոյ Մօտ

ՑՈՒՆԻՍԻ ՄԷՋ ԲԱՑՈՒԱԾ Հալթ Թիւ 2

Առաջին կարգի օթէլ, մասնաւորապէս շինուած, այժմու բոլոր հանգստաւէտութեան պայմաններով։ Հիանալի ճաշարան, սալօն, ծխարան։ Մասնաւոր ճաշարան։ Ընդարձակ պատշգամ և պարտէզ։ Ելեքտրական լոյս։ ՉԱՓԱՒՈՐ ԳԻՆ։ Թելեֆօն Թիւ 370։ Հեռագրական հասցէ՝ Նիւ Վիքթորիա, Ռամլէ։ Թրամվայով տասը վայրկեան Աղեքսանդրիայէն։

Ս. Ֆ. ՌԷՋԻԿ, ՏՆՕՐԷՆ

Յ. Գ.—Մասնաւոր գին կառավարական պաշտօնեաներու և զինուորականներու համար։ Բոլոր սենեակները ծովուն վրայ կը նային։

“ԱԶԱՏ ԽՕՍՔ„ի Պայմանները

- ԱԶԱՏ ԽՕՍՔ - ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Եգիպտոսի համար բաժնեգինն է

40	ԹԻՒԸ	40	ՂՐՇ. ՈՂՋ
20	„	20	„ „

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

ԵՒՐՈՊԱ	40	ԹԻՒ	10	ՖՐԱՆՔ
ՌՈՒՍԻ	,,	,,	4	ՐՈՒՊԼԻ
ԱՄԵՐԻԿԱ	,,	,,	2	ՏՈԼԱՐ

Բժի որդայր ուրբինը կանխիկ

ՀԱՏԸ 1 ՂՐՇ. ՈՂՋ

“ԱԶԱՏ ԽՕՍՔ„ի համար բաժնեգին կամ որ և է գրութիւն պէտք է ուղղել հետեւեալ հասցէին՝

K. Nazarethian

Rue Stamboul

ALEXANDRIE, (EGYPTE)

Տպագրութիւններ կընդունուին մասնաւոր պայմաններով։

Պատասխանատու - Խմբագիր Ե. ՕՏԵԱՆ

Տպգր. Փորգր. Գ. ՆԱԶԱՐԷԹԵԱՆ Ալեքսանդրիա